«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Ամսաթիվ՝	**31.08.2023թ.**
Ֆուտբոլային ակումբ՝	**«Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ**
Առաջնություն՝	**IDBank ՊԼ 2023-2024**
Խաղ՝	**«Արարատ-Արմենիա»-«Փյունիկ» (1:2), 23.08.2023թ.**
Վարույթ՝	**ՊԼ-015**

Հարգելի՛ գործընկեր,

Կից ներկայացված է ՊԼ-015 վարույթի շուրջ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից 2023 թվականի օգոստոսի 29-ին տեղի ունեցած նիստի արդյունքում կայացված որոշումը։

Խնդրում ենք որոշումն ընդունել ի գիտություն և ապահովել վերջինիս կատարումը՝ ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգով (2023թ. խմբագրություն) սահմանված կարգով։

Հարգանքով՝

ՀՖՖ Կարգապահական գրասենյակ

Պետ՝ Տաթևիկ Ասատրյան

Հասցեատեր՝

«Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcararatarmenia.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29.08.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Նարեկ Ադամյան
	Արփի Լազարյան
	Մալվինա Հարությունյան

Վարույթ՝	ՊԼ-015
Խախտում՝	«Արարատ-Արմենիա» թիմի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի (124) անվայել վարքագիծը և ոչ սպորտային պահվածքը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ) «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների և հյուրերի կողմից մրցավարների հասցեին հայհոյանքներ հնչեցնելը, անհարգալից արարքներ թույլ տալը (Հավելված 1 Ա, 21-րդ կետ) «Արարատ-Արմենիա» թիմի երկրպագուների կողմից խաղի ժամանակահատվածում մրցավարների ուղղությամբ խաղադաշտ իրեր նետելը (Հավելված 1 Ա, 22-րդ կետ)
Առաջնություն՝	IDBank ՊԼ 2023-2024
Խաղ՝	«Արարատ-Արմենիա»-«Փյունիկ» (1:2), 23.08.2023թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Որակազրկել «Արարատ-Արմենիա» թիմի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2023 թվականի օգոստոսի 23-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):
2. Հ Պատասխանատվության միջոցների համակցության միջոցով «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հազարերկուհարյուրապատիկի՝ 1.200.000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: